

Արարատեան Սրահին Մէջ

Հ.Մ.Մ.-Ի «ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ»-ԻՆ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿԱՑ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՌՆԱՐԿԸ

Ապրիլ ամսուան իր ձեռնարկներուն ծիրէն ներս, Հ.Մ.Մ.-ի Սկաւտական Խորհուրդին հովանաւորութեամբ, Հ.Մ.Մ.-ի Արարատեան սրահին մէջ տեղի ունեցաւ Ապրիլեան Նահատակաց Նուիրում ղեկչութեան ձեռնարկ մը, որուն ներկայ գտնուեցան գերապայծառ հայր Կարոյան Ազգարեանը, պետական Նախարար Ժան Օղասապեանը, Երեսփոխաններ ընկ. Սեպուհ Գալփաքեանն ու մեթոք Սերժ Թուրաբաղիսեանը, Սոցիալ Դեմոկրատ Յնչակեան կուսակցութեան Լիբանանի Շրջանի Կարիք Մարմինի անդամներ եւ Հ.Մ.Մ.-ի Կեդրոնական ու Պէրյուքի Տեղական վարչութիւններու անդամներ:



Մեծ թիւով հանդիսականներու ներկայութեան կայացած այս հանդիսութեան յայտագիրին բացումը կատարուեցաւ լիբանանեան, հայկական եւ կուսակցութեան քայլերգներու յոտնկայս ունկընդործեամբ, կատարողութեամբ Հ.Մ.Մ. Պէրյուքի փողերախումբին:



Սկաւտական Խորհուրդին անունով ելոյթ ունեցաւ Նագեիլ Եպէեան-Նալպաստեանը, որ անդրադարձաւ այս օրերուն հայու-թիւնը յուզող հարցերէն մասնաւոր հայ-թրքական յարաբերութիւններուն վերաբերող նորագոյն իրադարձութիւններուն: Ան շեշտը դրաւ այս առնչութեամբ մշակուող եւ մթութեամբ պարուրուած,



այսպէս կոչուած «ճանապարհային քարտէս» ծրագիրին վրայ: Պատմական ակնարկով հանդէս եկաւ Արա Կիւտէշեանը: Ան համառօտ պատմականը ներկայացուց Նախաեղեռնեան շրջա-



նին, ինչպէս նաեւ խօսեցաւ Հայոց Տեղասպանութեան ծրագրաւորման եւ գետնի վրայ գործարկութեան մասին, տալով հետաքրքրական մանրամասնութիւններ:



Ներկաները ականատես եւ ունկնդիր եղան օրուան անակնկալին, որն էր սկաւտական անդամներ բաղկացած երգչախումբ

մը, Նոր Հաճոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ «Գայիանէ» երգչախումբի խմբավար Վազգէն Զենտիմեանի ղեկավարութեամբ: Երգչախումբը հանդիսականներուն ուշադրութիւնը գրաւեց եւ գնահատանքի արժանացաւ իր ներկայացուցած կրկիկ ու հաճելի երգացանկով,



որ «համեմուած» էր բանաստեղծական հատուածներու մեկնաբանութիւններով, Ալիսիա Պարախեանի կատարողութեամբ: Երգերու առաջին մասի ունկնդրութենէն ետք, Կարօ Զաւուշեան հրամցուց հայ բանաստեղծութեան անմոռաց եւ հայ ժողո-



վորդի սիրտին ու միտքին մէջ յանրած ապրող, անուանի եւ մեծ բանաստեղծ Պարոյր Սեւակի «Կանչ եւ պիտի լինենք» քերթուածը: Սրահին մէջ գտնուողներուն համար շատ զգացական ու ազդեցիկ էր «Խեղդամահ» խորագրեալ թատերական կտորի ներկա-



յացումը, որ հանդիսականներուն շատերուն աչքերը թրջեց, իսկ ոմանք մեծ դժուարութեամբ կը զսպէին իրենց արցունքները: Բոլորն ալ, ուշ-ուշով եւ աչքերնին սեւեռած էին դրուագի իւրաքանչիւր դարձուածքին վրայ:

ՊԱՐ, ԱՍՏՈՒՆԵ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Կարճատե ընդմիջում-դադարէն ետք յայտագիրը շարունակեցաւ անելի ճոխ բովանդակութեամբ, առաջին հերթին հայկական պարերու շարքի մը ներկայացումով: Նախ արեւոյշները



հանդէս եկան «Ճորճ» պարի կատարողութեամբ, որուն յաջորդեց հայ ժողովուրդի մեծ ու արժանաւոր գաւակ Արամ Խաչատրեանի երաժշտական յօրինումով աշխարհահռչակ «Սուրբերու Պար»-ը, որ ներկաներուն հրամցուեցաւ գայլիկներու եւ արեւոյշներու կողմէ միատեղ:

Բանաստեղծ եւ լրագրող Համբիկ Մարտիրոսեանի գրիչին պատկանող բանաստեղծական հատուած մը ընթերցուեցաւ Կիզի Սալպաշեանի կողմէ: Ապա, արեւոյշները դարձեալ հանդէս եկան «Վիրաւոր Լորիկ» պարի կատարողութեամբ, որմէ ետք խմբավար Վ. Զենտիմեան ներկայացուց գուսան Պայծառի «Խօ-



սէջ, Հայաստանի լեռներ» երգը: Ապա երգչախումբը անոր ձայնակցեցաւ երգերու ցանկով մը եւ իր բաժինը աւարտեց «Յնչակեան Ենք Մենք» կուսակցական բոցաշունչ երգով, որուն յոտնկայս մասնակցեցան բոլոր ներկաները:



Ապրիլեան Եղեռնի 94-րդ տարելիցին նուիրուած այս ոգեկոչման ձեռնարկին փակման պարը կազդուրիչ, ոգետրիչ եւ յատկանշական էր իր «Կարմիր-Կապոյտ-Ծիրանագոյն» թաշկինակներով, որուն հետ սկաւտական լրիկ կազմը հրաժեշտ տուաւ



ներկաներուն, անոնց խանդավառ ծափողոյններուն ընկերակցութեամբ: Իսկապէս գնահատելի եւ յիշարժան ձեռնարկ մը, որուն համար շնորհաւորելի են Հ.Մ.Մ.-ի Սկաւտական Խորհուրդը եւ հանդիսութեան յաջողութեան սատարած ու բաժին բերած բոլոր մարմինները: Վարձքը կատար բոլորին:

Թ.

ARRA.CO. CONSTRUCTION advertisement featuring a tall building and contact information for Aram & Raffi Malian.